ԱՐՎԵՍՏԻ ԿՅԱՆՔԻՑ

ԼԻՏՎԱՑԻ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻ ՀԱՄԵՐԳՆԵՐԸ

Երևանյան երաժշտասերների հյուրն էր վաստակավոր կոլեկտիվ, լենինյան կոմերիտմիության մրցանակի դափնեկիր Լիտվայի կամերային նվագախումբը (գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր՝ ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Ս. Սանդեցկիս):

Լիտվացի երաժիշտների համերգները տեղի ունեցան Կամերային երաժշտության տանը և «Հայհամերգ» միավորման փոքր դահլիճում: Երկու երեկոյի ընթացքում հնչեցին Մոցարտի սիմֆոնիան, Շուբերտի մենուետները, Մենդելսոնի սիմֆոնիան, Վիվալդիի «Գեղջկական կոնցերտը», Ռոսինիի սոնատը, այլ ստեղծագործություններ:

Երևանյան երաժշտասերները սիրով ունկնդրեցին սովետահայ կոմպոզիտոր, ՀՍՍՀ պետական մրցանակի և հանրապետության լենինյան կոմերիտմիության մրցանակի դափնեկիր Տ. Մանսուրյանի կոնցերտը՝ երգեհոնի և կամերային նվագախմբի համար, որը կատարեց ՀՍՍՀ վաստակավոր արտիստ Վ. Ստեամբոլցյանը՝ լիտվացի արտիստների հետ:

Մ. ՎՇՏՈՒՆԻ

ԳԾԱՆԿԱՐԻ ԴԱՍԱԿԱՆ ՊԱՐԶՈՒԹՅՈՒՆ

Երևանի ժամանակակից արվեստի թանգարանի ցուցասրահներից երկուսը այս անգամ տրամադրվել են ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի ստեղծագործություններին:

Ցուցադրույթում ներկայացված են տասնյակ բնանկարներ, նատյուրմորտներ ու դիմանկարներ, որոնք պատկերում են այսօրվա մեր շենացող երկիրը, նրա անվանի մարդկանց: Դիտում ես գրաֆիկական թերթերը և մտովի համաձայնվում ՌՍՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Սավելի Ցամշչիկովի գրառումին. «...ոչ մի ավելորդ, կեղծ էֆեկտավոր բան չի խախտում Ռուդոլֆ Խաչատրյանի՝ Հայաստանի հողում ծնված և Ռուսաստանի սրտում իր ստեղծագործ աշխատանքը շարունակող այս նկարչի, արվեստի դասական ներդաշնակությունն ու վարպետորեն մշակված ձեռագրի պարզությունը: Այժմ նրա աշխատանքներն ունեն այն արժանիքները, որոնք արդեն այսօր թույլ են տալիս դրանք կոչել թանգարանային»:

Ցուցահանդես այցելող արվեստասերները մեծ հետաքրքրությամբ են դիտում «Կնոջ դիմանկար», «Նանան», «ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Լևոն Փիրուզյան», «Մոկոն», «Կիսադեմ», «Քարավանբաշի», «Նկարչուհի Ինեսա Օլևսկայա», «Աղջիկը՝ խնձորներով», «Դերասան Վլադիմիր Մարյան», «Բալետմեյստեր Մաքսիմ Մարտիրոսյան» դիմանկարների շարքը, ինչպես նաև «Վարդեր», «Նատյուրմորտ՝ ինքնաեռով», «Երեք ձուկ», «Ծաղիկներ» նատյուրմորտային աշխատանքները և այլն:

Նկարչի ստեղծագործական աշխարհում առանձնահատուկ տեղ են գրավում Երևանն ու հայկական լեռնաշխարհը: Նրա «Հին Երևանը», «Հին կոնդը», «Գեղամա լեռներ», «Պատշգամբ», «Փողոց՝ աղբյուրով», «Փոքր բակ» ստեղծագործությունները վերստեղծում են Հայաստանի մայրաքաղաքի և բնաշխարհի հուզական կերպարը:

— Ցուրաքանչյուր արվեստագետ իր ստեղծագործությամբ հոգեհարազատություն է փնտրում մարդկանց հետ,— ասում է ժամանակակից արվեստի թանգարանի տնօրեն, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Հենրիկ Իգիթյանը: Չէ՞ որ արվեստի գործը հասցեագրված է մարդկանց: Այս առումով Ռ. Խաչատրյանը երջանիկ նկարիչ է, նրա ստեղծագործական դիապազոնն այնքան լայն է, որ բնդունակ է իր արվեստի ոլորտը ներառնել գեղագիտական ամենատարբեր ըմբռնումների մարդկանց:

Ալ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Նկարներում.— Ռ. Խաչատրյան՝ 1. «Ինքնադիմանկար», 2. «Կիսադեմ», 3. «Նատյուրմորտ ձկով»:

Լուսանկարները՝ Տ. ՓԱՇԱՅԱՆԻ

«ՄԻԱՍՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ»

«Միասնական ընտանիքում» նշանաբանով ցուցահանդեսը, որ կազմակերպել են Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ժողովրդական ստեղծագործության հանրապետական կենտրոնները, բացվեց Երիտասարդության պալատում:

Ստուգատեսին մասնակցում են եղբայրական հանրապետությունների ամենատարբեր մասնագիտությունների ու տարիքի ինքնուս նկարիչներ: Նրանք ներկայացրել են 200-ից ավելի բնանկարներ, դիմանկարներ, գծանկարներ, քանդակներ, փայտից ու մետաղից պատրաստված իրեր, դեկորատիվ-կիրառական ստեղծագործություններ:

(Արմենպրես)

ԺՈՂԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆՎԱԳԱԽՈՒՄԲԸ՝ ԳՈՐԻՍՈՒՄ

Գորիսում համերգներով հանդես եկավ Հայաստանի ժողովրդական գործիքների պետական նվագախումբը (գեղարվեստական ղեկավար՝ կոմպոզիտոր Վլադիլեն Բալյան, դիրիժոր՝ Հենրի Մանգասարյան):

Ունկնդիրները ջերմորեն ընդունեցին երգիչներ Էդվարդ Դարբինյանին, Մանիկ Գրիգորյանին, Ֆլորա Մարտիրոսյանին, Լևոն Իսպիրյանին, որոնք մեծ վարպետությամբ կատարեցին հայկական ժողովրդական և գուսանական երգեր:

Ա. ՇԱԼՈՒՆՑ

ՄԱՐԶԱՍԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ